Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Անահիտ Ավանեսյան, առողջապահության նախարար

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

2023 թ. սեպտեմբերի 4-7-ը, Պորտուգալիայի Հանրապետություն (Պորտու)

3. **Հրավիրող կողմը**

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Գիտաժողովի նպատակն էր ներգրավել անդամ-պետությունների և գործընկեր կազմակերպությունների բարձրաստիճան ներկայացուցիչների, ինչպես նաև հեղինակավոր փորձագետների՝ բացահայտելու ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանում հանրային առողջապահական համակարգերի թվային վերափոխման առաջնահերթությունները: Բացի այդ, սիմպոզիումի մասնակիցների համատեղ աշխատանքի արդյունքները օգնեցին ծանոթանալու ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանի 2023-2030 թթ. տարածաշրջանային թվային առողջապահության գործողությունների ծրագրի իրականացմանն աջակցող միջոցառումներին:

5. **Քննարկված թեմաները**

«Եվրոպական տարածաշրջանում առողջապահական համակարգերի ապագան թվային դարաշրջանում» խորագրով ԱՀԿ երկրորդ գիտաժողովի շրջանակներում մասնակցել եմ նախարարական պանելային քննարկմանը: Ներկայացրել եմ Հայաստանի փորձը առողջապահության թվայնացման ոլորտում:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպումները կայացել են ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով: Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանային գրասենյակի ղեկավար Հանս Կլյուգեի հետ կայացած հանդիպման շրջանակներում քննարկումներ են տեղի ունեցել թվային առողջապահության ոլորտում Հայաստանի ձեռքբերումների և հեռանկարների շուրջ: Անդրադարձ է արվել նաև հնարավոր համագործակցության արդի ուղղություններին:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Այցի ընթացքում քննարկվեցին հետագա երկկողմ և բազմակողմ համագործակցության ուղղությունները, պայմանավորվածություն ձեռք բերվեց խորացնել համագործակցությունը մասնակից երկրների միջև: Միջոցառման մասնակիցները առողջապահության ոլորտի զարգացմանն ուղղված աշխատանքներ տանելու պատրաստակամություն են հայտնել:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Միջոցառման մասնակիցները ջանքեր կներդնեն համաժողովի ընթացքում ձեռք բերած գիտելիքները Հայաստանում կիրառելու: Հանդիպումների ընթացքում առաջարկվել է ամրապնդել մասնագետների փոխգործակցությունն ու կապերը:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

2023 թ. սեպտեմբերի 12

12.09.2023

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — N 848-Ա 17.08.2023թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*) — Նախարար Անահիտ Ավանեսյան
4. Գործուղման վայրը — Պորտուգալիայի Հանրապետություն ք. Պորտու
5. Գործուղման ժամկետները — 2023թ.սեպտեմբերի 4-7-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*) — Ճանապարհածախս, գիշերավարձ և օրապահիկ

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | *Անուն, ազգանուն 1* | *Անուն, ազգանուն 2* | **Ընդամենը** (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|
| Ճանապարհածախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | | | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | | | |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | | |
| | Օրերի քանակը | | | |
| | Ընդամենը (դրամ) | | | |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | | |
| | Օրերի քանակը | | | |
| | Ընդամենը (դրամ) | | | |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | | |
| | Այլ ծախսեր (նկարագրել) | | | |
| **Ընդամենը ծախսեր** (հազ. դրամ) | | | | |

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը ____________ (ստորագրություն) 13.09.2023թ.